Արձանագրություն N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «03» փետրվարի 2016թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) Հ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Տիգրան Ստեփանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական վարչության մասնագետ:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Արմեն Ասլանյանը՝ (Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-02» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի փետրվարի 03-ին, ժամը 11:00-ին:

2. Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր /նախահաշվային/ գնի վերաբերյալ.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի/այսուհետև՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	Ինտերնետային կապի տրամադրման ծառայություն (ծառայության մատուցումը «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ՀՀ մարզերում գտնվող առանձնացված ստորաբաժանումներին)	16 000 000

2.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը, հեռախոսահամարը
1	«Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ	Հասցե՝ ք. Երևան, Արգիշտի 4/1 Հեռ. (010) 568777

2.3 Համակարգում 22.01.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

3.1 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1.1 «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ -ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3.2 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի/՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

3.2.1 «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները՝

ա) Մասնագիտական փորձառության մասին հայտարարությունում՝ Հավելված 3.1-ում, թերի է նշված համանման (նմանատիպ) պայմանագրի անվանումը,

բ) Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին հայտարարության մասով Հրավերով սահմանված է, որ եթե Մասնակիցը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, ապա Մասնակիցը հայտով ներկայացնում է Հավելված 3.4-ը, եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա հայտով ներկայացնում է Հավելված 3.5-ը: Հաշվի առնելով, որ «Ղ-ՏԵԼԵԿՈՄ»

ՓԲԸ-ն իր կողմից ներկայացրած Հավելված 1-ով նաև հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, ուստի «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ -ն պետք է ներկայացներ Հավելված 3.4-ը, այնինչ ՓԲԸ -ի կողմից ներկայացվել է Հավելված 3.5-ը,

գ) <<Ղ-ՏԵԼԵԿՈՄ>> ՓԲԸ-ի կողմից Համակարգի Ֆինանսական բաժնում սխալ է լրացված Գնային առաջարկ՝ առանց ԱԱՀ-ի գումարը,

դ) Հավելված 4-ը կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ <<Ղ-ՏԵԼԵԿՈՄ>> ՓԲԸ-ն իր կողմից ներկայացված գնային առաջարկի /Հավելված 4/ <<Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/>> սյունում նշել է՝ <<16 000 000 /Տասնվեց միլիոն դրամ/ **տարեկան**>>, այնինչ հրավերի Հավելված 6-ով սահմանվել է, որ. <<Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ>>:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով և 45-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գներն են՝

ՀՀ դրամ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	1. <<Դ-ՏԵԼԵԿՈՄ>> ՓԲԸ				
		Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
1	Ինտերնետային կապի տրամադրման ծառայություն (ծառայության մատուցումը «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ՀՀ մարզերում գտնվող առանձնացված ստորաբաժանումներին)	12,000,000	1,333,333	13,333,333	2,666,667	16,000,000

5. Հաշվի առնելով, որ ներկայացված միակ հայտը չի համապատասխանում հրավերի պայմաններին, հանձնաժողովը որոշեց.

ա) «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն,

բ) հաստատել «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է).

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Սարգիս Արմենակյան

Անդամներ՝

Արթուր Թամրազյան

Խորեն Պետրոսյան

Տիգրան Ստեփանյան

Քարտուղար՝ Մարիամ Հայրապետյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ <<ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-02> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2016 թվականի փետրվարի 03-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-02

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համառոտ տեղեկատվությունը:

Չափաբաժին	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
1	Ինտերնետային կապի տրամադրման ծառայություն (ծառայության մատուցումը «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ՀՀ մարզերում գտնվող առանձնացված ստորաբաժանումներին)	«Դ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ	<u>1-ին կետի</u> 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	«Դ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով և 45-րդ կետով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող Մարիամ Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**